ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ – Ծ1032.Մ11001/24-4
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ՎԱՐԴԵՆԻՍԻ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ-ԻՆՏԵՐՆԱՏ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «08» «02» 2024 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ս.Մուրադյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Ռ. Խլոյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի 1032 «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի կազմակերպում և կացարանով ապահովում» ծրագրի 11001 «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված չափաքանակից՝ 1,378,005.100 (մեկ միլիարդ երեք հարյուր յոթանասունութ միլիոն հինգ հազար հարյուր) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը՝ պարտավորվում է իրականացնել սննդի տրամադրումը, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրումը, իրավական խորհրդատվության տրամադրումը, աջակցող միջոցներով ապահովումը, բժշկասոցիալական փորձաքննությունը կամ անձի ֆունկցիոնալության գնահատումը, հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրելը, ազատ ժամանցը, աշխատանքային թերապիան, անհրաժեշտ կահույք, հագուստ, սպիտակեղեն, կոշկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան, անկողնային պարագաներ, անձնական հիգիենայի պարագաներով ապահովումը՝ սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված Միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառումներ) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների, բարեգործական և այլ միջոցների շրջանակներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի բնականոն գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. անհրաժեշտությամբ պայմանավորված կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. սույն պայմանագրի N 1 հավելվածի ձևաչափով նախատեսած միջոցառումների իրականացման մասին ներկայացված կատարողական ամսական հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել (դրական/բացասական եզրակացություն) պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսած միջոցառումների և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են, որի համար տրվում է եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումներն իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել կազմակերպությունում հաշվետու ժամանակաշրջանում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում փոխհատուցման ենթակա ֆինանսական միջոցների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 4 հավելվածի.

2.4.6. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.7. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում Գլխավոր ֆինանսիստի հաստատմանը ներկայացնել ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը: Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան հիմնավորումների հետ միասին, Նախահաշվի յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Գլխավոր ֆինանսիստի համաձայնեցմանը, այնուհետև՝ հաստատմանը.

2.4.8. 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով.

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.10. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությանը միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով կարող է իրականացնել մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Հաշվետու ամսվա ավարտից հետո նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվում է Միջոցառումների իրականացման վերաբերյալ Եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի:

4.2. 4.1 կետով սահմանված Եզրակացության դրական գնահատման դեպքում Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 17-ը, Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երկուական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 5 հավելվածի:

4.3. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում խնամվողների թվաքանակի շարժի և փոխհատուցման ենթակա ֆինանսական միջոցների վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 3 և 4 հավելվածների:

4.4. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.

4.5. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնահատվում է սույն պայմանագրի N 1 հավելվածին կից Ձևաչափի, ինչպես նաև ՀՀ ԱՍՀՆ 22.06.2016թ. N 69-Ա/1 հրամանի 2.10 կետի, նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության հիման վրա: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 6 հավելվածի: 75% -ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման:

4.6 ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը, իսկ որոշ ծախսային հոդվածների գծով դեկտեմբեր ամսվա արդյունքներով պայմանավորված խնայողությունների ետ վերադարձը իրականացնել մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը:

5. Պայմանագրի գինը

5.1 Սույն պայմանագրի տարեկան գինը կազմում է 1,378,005.100 (մեկ միլիարդ երեք հարյուր յոթանասունութ միլիոն հինգ հազար հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները:

5.1.1 Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

5.2. Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո կազմակերպությանը տրամադրվում է կանխավճար՝ պայմանագրի գնի 1/12-րդ չափով, դեկտեմբեր ամսին մարելու պայմանով:

5.3 Պայմանագրի գինը իր մեջ ներառում է փոփոխուն և հաստատուն ծախսեր.

5.3.1. փոփոխուն ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 236,882.500 (երկու հարյուր երեսունվեց միլիոն ութ հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Ընդ որում, մեկ շահառուի հաշվարկով տարեսկզբից աճողական առավելագույն միջին գինը փոփոխուն ծախսերի գծով կազմում է 1,407 ՀՀ դրամ:

5.3.2. հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 1,141,122.600 (մեկ միլիարդ հարյուր քառասունմեկ միլիոն հարյուր քսաներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

5.4. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.5. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 5 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցվող գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափը գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2024 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N N 1, 2, 3, 4, 5, 6 հավելվածները բաղկացած են 13 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն Հ/Հ 900011016764 ՀՎՀՀ 01506515	ՀՀ ԱՍՀՆ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ ք.Վարդենիս, Զորավար Անդրանիկի փող.4, նրբ.1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900158000027 ՀՎՀՀ 08800705
Նախարարության գլխավոր քարտուղար Ս.Մուրադյան (ստորագրություն) L.S.	Տնօրեն՝ Ռ. Խլոյան (ստորագրություն) L.S.

Հավելված N 1
2024 թվականի 08. 02 -ին կնքված
ԴՏՊ – Ծ1032.Մ11001/24-4 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

«Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման հիմնական նպատակն է շուրջօրյա խնամքի տրամադրումը բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում՝ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված անձանց՝ անհատական սոցիալական ծրագրի համաձայն:

Շուրջօրյա խնամքի կենտրոնում կազմակերպվում է շահառուների՝ սննդի տրամադրումը, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրումը, իրավական խորհրդատվության տրամադրումը, աջակցող միջոցներով ապահովումը, բժշկասոցիալական փորձաքննությունը կամ անձի ֆունկցիոնալության գնահատումը, հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրելը, ազատ ժամանցը, աշխատանքային թերապիան:

Շուրջօրյա խնամքի կենտրոնը շահառուներին տրամադրում է՝ անհրաժեշտ կահույք, հագուստ, սպիտակեղեն, կոշկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան, անկողնային պարագաներ, անձնական հիգիենայի պարագաներ:

Միջոցառումն ունի երկու բաղադրիչ, տվյալ պարագայում՝ որպես հատուկ (մասնագիտացված) խնամք՝ շահառու կարող են հանդիսանալ խնամքի կարիք ունեցող տարեց և (կամ) հաշմանդամություն (այդ թվում՝ համապատասխան դեղորայք գործածող, վարքային խանգարում ունեցող թեթև կամ չափավոր աստիճանի, ինչպես նաև՝ խոր կամ ծանր աստիճանի մտավոր խնդիրներ, ծերունական փսիխոզ, ծանր արտահայտված սկլերոզ կամ հոգեկան առողջության այլ խնդիրներ) ունեցող անձինք:

Սույն միջոցառման համար դրամաշնորհը տրամադրվում է «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված շահառուներին շուրջօրյա հատուկ (մասնագիտացված) խնամքի ծառայություններ տրամադրելու նպատակով: Կազմակերպությունն իրականացնում է 460 շահառուի (այդ թվում՝ անկողնային խնամքի ենթակա 70 շահառուի) շուրջօրյա հատուկ (մասնագիտացված) խնամքի ծառայության տրամադրում՝ համաձայն Կազմակերպության տնօրենի 2024 թվականի հունվարի 23-ի N 71-Լ հրամանով հաստատված հաստիքացուցակի 375 հաստիքային միավորի միջոցով ՝ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Անվանում	Համառոտ բովանդակություն	Կատարման ենթակա գործառույթների նկարագիր	Ակնկալվող արդյունքային ցուցանիշներ և գնահատման չափանիշներ	Միջոցառման իրականացման վերջնաժամկետ	Պահանջվող գումար
Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա հատուկ (մասնագիտացված) խնամքի	Խնամքի տրամադրում միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից	Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց (այսուհետ՝ շահառու) շուրջօրյա հատուկ (մասնագիտացված) խնամքի տրամադրման	• իրավական խորհրդատվության տրամադրում՝ շահառուին իրավական (ներառյալ՝ կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների ստացման, որպես կենսաթոշակառու տարբեր արտոնություններից օգտվելու) խորհրդատվության և օգնության տրամադրում, ըստ անհրաժեշտության իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ու խնամքի ներկայացում ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշման N 2 հավելվածի 27-րդ կետում նշված հաստիքային միավորների	31.12.2024	Սույն պայմանագրով նախատեսված և օրենսդրությամբ չարգելված

ծառայություններ	ուղեգրված անձանց՝ անհատական սոցիալական ծրագրի համաձայն	ժամանակ մատուցվում են հետևյալ ծառայությունները՝ 1) խնամքի ծառայություններ հայցող շահառուի անհատական կարիքների գնահատում և գնահատված կարիքներին համարժեք ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում. 2) անհատական սոցիալական ծրագրի կազմում. 3) խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝ • սննդի տրամադրում. • առաջնային բժշկական օգնության	կողմից. • սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրում, այդ թվում՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման գործընթաց՝ ապահովելով շահառուների անձնական տվյալների պաշտպանությունը՝ համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի մարտի 30-ի N 47-Ա/1 հրամանի պահանջների, սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների և հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգի վարում, սոցիալական աշխատանքի իրականացում, անհատական սոցիալական կարիքի գնահատում և <u>յուրաքանչյուր եռամսյակ վերագնահատում</u>, շահառուին նոր միջավայրում հարմարվելուն և այլ բնույթի սոցիալ-հոգեբանական օգնության ցուցաբերում, այդ թվում՝ ոչ պակաս, քան յուրաքանչյուր շահառուին տարեկան առնվազն 8 անգամ կամ <u>եռամսյակը 2 անգամ</u>, հոգեկան առողջության վերականգնմանն ուղղված ծառայություններ, շահառուի նախասիրությունների բացահայտում, համապատասխան տարաբնույթ ծառայությունների, միջոցառումների, ազատ ժամանցի և հանգստի կազմակերպում, շահառուի համար տարատեսակ փաստաթղթերի, սոցիալական ապահովության խնդիրների լուծման հարցերում աջակցության և ուղղորդում, բժշկասոցիալական փորձաքննություն կամ անձի ֆունկցիոնալության գնահատում, աջակցող միջոցներով ապահովելու գործընթացի կազմակերպում, անկախ կյանքի հմտությունների ձևավորում (ինքնասպասարկման, կենցաղավարման, տեղաշարժման, հաղորդակցման, ուսումնասիրության, միջանձնային և սոցիալական հարաբերություններ ստեղծելու հմտություններ) և սոցիալական ներառմանն ուղղված այլ միջոցառումներ, այդ թվում՝ շահառուների ընտանիքների հետ սոցիալական կապերի ամրապնդում (առկայության դեպքում) կարիքների գնահատման հիման վրա և սոցիալ-հոգեբանական աշխատանքի արդյունքում՝ շահառուի վերադարձ ընտանիք՝ տարեկան շահառուների <u>ընդհանուր թվի առնվազն 5%-ով</u>, շահառուի վերականգնողական, մասնագիտական ծառայությունների տրամադրման նպատակով այլ ստորաբաժանումների աշխատանքի համակարգում, այդ թվում՝ վերականգնողական ծառայությունների տրամադրում ըստ անհրաժեշտության՝ դրա կարիքն ունեցող յուրաքանչյուր շահառուին՝ տարեկան առնվազն 12 անգամ կամ <u>եռամսյակը 3 անգամ</u>,		այլ միջոցների շրջանակներում.

		և սպասարկման տրամադրում, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն և խորհրդատվություն. • սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրում, այդ թվում՝ հոգեկան առողջության վերականգնմանն ուղղված ծառայություններ. • իրավական խորհրդատվության տրամադրում. • աջակցող միջոցներով ապահովում. • բժշկասոցիալական փորձաքննություն կամ անձի ֆունկցիոնալության գնահատում. • հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրել. • ազատ ժամանցը. • աշխատանքային թերապիան, այդ թվում՝ սոցիալական հմտությունների և կարողությունների զարգացմանն	շահառուին հոգեբանական օգնության տրամադրում՝ անհատական և խմբային վերապատրաստումներով, մշակութային, մարզական միջոցառումների անցկացումը և ազատ ժամանցը, այդ թվում՝ մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում տարեկան առնվազն 8 անգամ, <u>յուրաքանչյուր եռամսյակ՝ առնվազն 2 միջոցառում</u>, ապահովելով յուրաքանչյուր միջոցառմանը շահառուների ընդհանուր թվի <u>առնվազն 80 %-ի մասնակցությունը</u>, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների պատրաստում, ամբողջը՝ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշման N 2 հավելվածի 38-րդ և (կամ) 40-րդ կետերում նշված հաստիքային միավորների կողմից. • աշխատանքային թերապիա, այդ թվում՝ սոցիալական հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված և այլ մասնագիտացված ծառայություններ, շահառուների ներգրավում տարբեր մշակութային, արվեստների և արհեստագործական խմբակներում՝ ըստ իրենց նախասիրությունների, շահառուների աշխատանքային թերապիայի կազմակերպում և իրականացում համապատասխան մասնագիտական արհեստանոցներում կամ գյուղատնտեսական նշանակության տեղամասերում, այդ թվում՝ աշխատանքային/արտթերապիայի տարբեր տեսակներով զբաղվածության ապահովում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի N 142-Ա/1 հրամանի պահանջներին համապատասխան՝ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշման N 2 հավելվածի 40-րդ կետում նշված հաստիքային միավորների կողմից. • առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրում, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն և խորհրդատվություն, դեղերի տրամադրում, շահառուների պարբերական բժշկական զննություն, անհրաժեշտության դեպքում, սոցիալական աշխատողի հետ համատեղ շահառուի՝ սահմանված ժամկետներում բժշկասոցիալական փորձաքննություն անցնելուն կամ անձի ֆունկցիոնալության գնահատման աջակցություն՝ ուղեգրման և բժշկասոցիալական փորձաքննության կամ կամ անձի ֆունկցիոնալության գնահատման ներկայացնելու, աջակցող միջոցներով ապահովելու գործընթացի կազմակերպում, շահառուին նախատեսված դեղերի տրամադրում, ըստ անհրաժեշտության, այլ բժշկական հաստատություններ ուղղորդում և այդտեղ շահառուի գտնվելու ժամանակահատվածում խնամքի իրականացում,		

		ուղղված և այլ մասնագիտացված ծառայություններ : 4) պայմանագրում նշված այլ ծառայություններ: Կազմակերպությունը պետք է ղեկավարվի՝ • «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով. • ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշմամբ. • ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 138-Ա/1 հրամանով • ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն որոշմամբ:	աշխատանքային թերապիայում ընդգրկվելու վերաբերյալ եզրակացությունների տրամադրում, շահառուի առողջության վրա աշխատանքային թերապիայի ազդեցությունների ուսումնասիրություն, խորհրդատվության տրամադրում, շահառուի՝ հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ ուղեգրման կազմակերպում՝ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշման N 2 հավելվածի 43-րդ կետում նշված հաստիքային միավորների կողմից. • կենցաղային սպասարկում և հետևյալ իրերի տրամադրում՝ անհրաժեշտ կահույք, հագուստ, սպիտակեղեն, կոշկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան, անկողնային պարագաներ, անձնական հիգիենայի պարագաներ՝ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշման N 2 հավելվածի 46-րդ, 52-րդ և (կամ) 54-րդ կետերում նշված հաստիքային միավորների կողմից (ընդ որում, գույքը կարող է տրամադրվել մասամբ՝ կենտրոնի սոցիալական աշխատողի, հոգեբանի և հոգեբույժի համատեղ եզրակացությամբ հիմնավորված հակացուցումների առկայության դեպքում). • սննդի տրամադրում, այդ թվում՝ սննդի կազմակերպում՝ օրական առնվազն երեք անգամ, խոհանոցում և ճաշարանում առկա տեխնիկական միջոցների և գույքի պահպանում և շահագործում, դրանց նորոգման աշխատանքների կազմակերպում, անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացում՝ օրական ճաշացանկի կազմում, անհրաժեշտ մթերքի ստացում, դրանց լվացում, մաքրում, կտրատում և եփում, շահառուներին անհրաժեշտ քանակի և որակի սննդի կազմակերպման աշխատանքների իրականացում, այդ թվում՝ անկողնային խնամքի կարիք ունեցող անձանց կերակրման աշխատանքների կազմակերպում, սնվելու ժամանակ շահառուների համար պայմանների ապահովում (ճաշարանի մաքրություն, սպասքի տեղադրում և հավաքում, սպասքի լվացում և այլն), ճաշարանի աշխատանքային փաստաթղթերի (այդ թվում՝ ճաշացանկի, սննդի կազմակերպում ստացող շահառուների՝ մարդ/օր ցանկի և այլն) լրացում և կազմում՝ ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1744-Ն որոշման N 2 հավելվածի 49-րդ կետում նշված հաստիքային միավորների կողմից:		

Սույն նկարագրով սահմանված արդյունքային որակական ցուցանիշների գնահատման համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն (այսուհետ՝ նախարարություն) սահմանված ժամանակացույցին համապատասխան իրականացնում է կազմակերպության գործունեության մոնիթորինգ և գնահատում, որի արդյունքներն, ըստ անհրաժեշտության, քննարկվում են ծառայություն մատուցող կազմակերպության հետ, ներառյալ՝ արդյունքային որակական ցուցանիշների կատարողականի բարելավման նպատակով:

Կազմակերպությունը ներկայացնում է միջոցառումների իրականացման մասին ամսական բովանդակային հաշվետվություններ՝ ֆինանսական հաշվետվության և հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ՝ համաձայն կից ձևաչափի՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից եզրակացության դրական կամ բացասական դիրքորոշում տալու նպատակով: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է հաշվետվության և հաշվետվության կատարողականի գնահատման արդյունքների քննարկում՝ հաշվետու կազմակերպության մասնակցությամբ:

Կազմակերպությունը օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է «Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգի» շահագործումը, այդ թվում՝ շահառուների տվյալների և մոնիթորինգային ցուցանիշների մուտքագրումը, խմբագրումը, հաշվետվությունների կազմումը և սահմանված՝ ամենամսյա, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ նախարարություն ներկայացումը:

Կազմակերպության աշխատանքը, ըստ եռամսյակային հաշվետվության, գնահատվում է բավարար, եթե՝

- վերը նշված արդյունքային բոլոր ցուցանիշների կատարողականի միջինացված ամփոփ գնահատականը կատարվել է նվազագույնը 75 %-ով.
- ապահովվել է շահառուների պլանային թվի նվազագույնը 75 %-ը:

Ծրագրի գնահատումը

Նշված բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում է Պայմանագրի հավելվածների համաձայն հաստատված ֆինանսական և եռամսյակային հաշվետվությունների, նախարարության կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքների վերլուծության հիման վրա, ինչպես նաև, առկայության դեպքում՝ նախարարության տեղեկատվական համակարգում լրացված տեղեկատվության վերլուծության արդյունքների հաշվառմամբ: Կազմակերպության կողմից տրամադրված ծառայության արդյունքների գնահատման գործում կարևորագույն ցուցիչ են հանդիսանալու ծրագրում նշված նպատակադրումները:

Նշված ցուցանիշների համադրման արդյունքում հնարավոր կլինի գնահատել ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև տրամադրել առաջարկություններ կազմակերպության որակական ցուցանիշների կատարողական արդյունքների հետագա բարելավման համար:

Սույն փաստաթուղթը համարվում է դրամաշնորհի տրամադրման պայմանագրի անքակտելի մասը:

Ձևաչափ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի շուրջօրյա հատուկ (մասնագիտացված) խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

հ/հ	Մատուցվող ծառայության անվանումը	Ծառայություն ստացած անձանց թիվը
1.	Հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը	
1.1	Այդ թվում՝ կին	
1.2	Այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձ՝ 18-65 տարեկան	
1.2.1	այդ թվում՝ կին	
1.2.2	18-40 տարեկան	
1.2.3	40-65 տարեկան	
1.3	Այդ թվում՝ 65-ից բարձր տարիքի անձինք	
1.4	Անկողնային խնամքի կարիք ունեցող շահառուներ	
2.	Հաշվետու ժամանակահատվածում ընդունվել է	
3.	Հաշվետու ժամանակահատվածում դուրս է գրվել, այդ թվում՝	

3.1	Վերադարձել է ընտանիք	
3.2	Ընդունվել է այլ հաստատություն	
3.3	Մահացել է	
4.	Առաջին օգնության և սպասարկման տրամադրում, այդ թվում՝ դեղերի տրամադրում	
5.	Վերականգնողական ծառայություններ (նշել տեսակը և ծառայություններ ստացողների թիվը)	
6.	Ուղեգրվել է ստացիոնար բուժհաստատություն	
7.	Կարիքի գնահատում	
8.	Այցելություններ (շահառուի և նրա մոտ) , հանդիպումներ	
9.	Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում (նշել տեսակները և մասնակիցների թիվը)	
10.	Մշակութային միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝	
10.1	Հաստատությունից դուրս	
11.	Ուղեկցման ծառայություններ	
12.	Այլ ծառայություն (*նշել*)	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
Նախարարություն

Գլխավոր քարտուղար Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Վարդենիսի նյարդահոգեբանական
տուն-ինտերնատ» ՊՈԱԿ

Տնօրեն՝ Ռ. Խլոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

N2 Հավելված

2024 թվ.« 08 » « 02 » կնքված

N ԴՏՊ- Ծ1032.Մ11001/24-4 պայմանագիր

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի 1032 «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի կազմակերպում և կացարանով ապահովում» ծրագրի 11001 «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման շրջանակներում շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման համար սահմանվող

1	Շահառուների միջին ամսական թվաքանակը	460	շահառու
2	Հաստիքային միավորների թվաքանակը	375	հաստիքային միավոր
3	Մատուցվելիք ծառայության մարդ/օրերի տարեկան քանակը	168,360	մ/օր
4	Տարեսկզբից աճողական մեկ շահառուի հաշվարկով առավելագույն միջին գինը փոփոխուն ծախսերի գծով	1,407	դրամ
5	Փոփոխուն ծախսեր	236,882.5	հազ. դրամ
6	Հաստատուն ծախսեր	1,141,122.6	հազ. դրամ
7	Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը	**1,378,005.1**	հազ. դրամ

այդ թվում՝

Խնամքի իրականացման գծով

ա/ ծառայության մատուցման ժամանակացույցը

Ամիսները	Ընդամենը (մարդ/օր)	Ամիսները	Ընդամենը (մարդ/օր)
հունվար	14,260	հուլիս	14,260
փետրվար	13,340	օգոստոս	14,260
մարտ	14,260	սեպտեմբեր	13,800
ապրիլ	13,800	հոկտեմբեր	14,260
մայիս	14,260	նոյեմբեր	13,800
հունիս	13,800	դեկտեմբեր	14,260
Ընդամենը			***168,360***

բ/ մատուցվելիք ծառայության դիմաց դրամաշնորհի տրամադրման ժամանակացույցը

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
հունվար	20,063.8	հուլիս	137,857.9
փետրվար	38,833.2	օգոստոս	157,921.7
մարտ	58,897.0	սեպտեմբեր	177,338.3
ապրիլ	78,313.6	հոկտեմբեր	197,402.1
մայիս	98,377.4	նոյեմբեր	216,818.7
հունիս	117,794.0	դեկտեմբեր	236,882.5
Ընդամենը			**236,882.50**

գ/ մատուցվելիք ծառայության սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական տարրերի.

Տնտեսագիտական դասակարգման խմբերի անվանումը	Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Նյութեր (ապրանքներ)	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	426700	236,882.5
Ընդամենը	x	x	236,882.5

Հաստատուն ծախսերի գծով

ա/ կատարվելիք հաստատուն ծախսերի դիմաց դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց.

Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ.դրամ)
հունվար	94,770.0	հուլիս	665,978.5
փետրվար	190,834.4	օգոստոս	760,748.5
մարտ	285,604.3	սեպտեմբեր	856,165.5
ապրիլ	381,021.5	հոկտեմբեր	950,935.5
մայիս	475,791.5	նոյեմբեր	1,046,352.6
հունիս	571,208.6	դեկտեմբեր	1,141,122.6
Ընդամենը			**1,141,122.6**

բ/ կատարվելիք հաստատուն ծախսերի սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական տարրերի.

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Աշխատանքի վարձատրություն	410000	978,220.6
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	158,859.0
Այլ ծախսեր	480000	4,043.0
Ընդամենը		**1,141,122.6**

Պատվիրատու

Նախարարության գլխավոր քարտուղար՝

Մ. Մուրադյան

Կատարող

Տնօրեն՝

Ռ. Խլոյան

N3 Հավելված

«02» » 2024թ. կնքված N ԴՏՊ – Ծ1032.Մ11001/24-4 պայմանագրի

Հաշվետվություն

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի 1032 «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի կազմակերպում և կացարանով ապահովում» ծրագրի 11001 «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման շրջանակներում շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից .....ամսում փաստացի խնամվողների թվաքանակի շարժի վերաբերյալ

	Հաշվետու ժամանակաշրջանը	Հաշվետու ժամանակաշրջանի օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում Գրանցվածների թիվը	Ընդունվել են	Դուրս են գրվել	այդ թվում			Ժամանակավոր բացակայող խնամվողների թիվը	ժամանակավոր բացակայությունից վերադարձած խնամվողների թիվը	Խնամվողների թիվը հաշվետու ամսվա վերջում	այդ թվում		Դուրս գրված խնամվողների մարդ/օրերի թիվը	ժամանակավոր բացակայող խնամվողների բացակայության մարդ/օրերի թիվը	Սոր ընդունված և ժամանակավոր/բացակայություն նից վերադարձած խնամվողների մարդ/օրերի թիվը	Խնամվողների փաստացի մարդ/օրերի թիվը	Հաշվետու ժամանակաշրջանում խնամվողների միջին թիվը	Պլանային մարդ/օրերի թիվը
						Վերադարձել են ընտանիք	Լուսացել են	Տեղափոխվել են այլ հաստատություններ				Տղամարդ	Կին						
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1					0												0	#DIV/0!	0
	ԸՆԴԱՄԵՆԸ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	#DIV/0!	0

ՊՈԱԿ-ի տնօրեն (ստորագրություն) (անուն,ազգանուն)

Գլխավոր հաշվապահ (ստորագրություն) (անուն,ազգանուն)

Կ.Տ.

N 4 Հավելված
2024 թ.-ի 02 "կնքված
Ծ1032.Մ11001/2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի 1032 «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի կազմակերպում և կացարանով ապահովում» ծրագրի 11001 «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման շրջանակներում շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին ամսում փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարի վերաբերյալ

հազ.դրամ

Ծախսային հոդվածներ					Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը			Հաստատված նախահաշվի գումարը	Ճշտված նախահաշվի գումարը	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	բարեգործական կազմակերպության անվանումը
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝		x	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Փոփոխուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Կենցաղային և հանրային սննդի նյութեր		426700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Հանրային սննդի նյութեր	426720						0.0	0.0	0.0	
Հաստատուն ծախս			0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
-Աշխատողների աշխատավարձեր և		411000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մշտական աշխատողների աշխատավարձեր և	411110									
	Ժամանակավոր աշխատողներին վճարվող	411120									
	Դատարանի որոշումների հիման վրա վճարվող	411130									
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ		412000	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Պարգևատրումներ	411210									
	Դրամական խրախուսումներ	411220									
Էներգետիկ ծառայություններ		421200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Էներգետիկ ծառայություններ	421210									
	Ջեռուցման ծառայություններ	421220									
Կոմունալ ծառայություններ		421300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	421310									
	Այլ կոմունալ ծառայություններ	421390									
Կապի ծառայություններ		421400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	կապի աբոնենտային	421410									
	փողական խոսակցությունների										
	միջքաղաքային խոսակցության գումար										
	ինտերնետային կապ										
	Փոստային և սուրհանդակային վճարներ	421420									
Ապահովագրական ծախսեր		421500	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի ապահովագրություն	421510									
Գույքի և սարքավորումների վարձակալություն		421600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գույքի վարձակալություն	421610									
	Սարքավորումների	421620									
Ներքին գործուղումներ		422100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ներքին գործուղումների	422110									
	Ներքին գործուղումների գծով հյուրանոցային ծախսեր	422120									
	Ներքին գործուղումների տրանսպորտային ծախսեր (օդանավ, ավտոբուս, գնացք և	422130									
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		423900	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423910									
Մասնագիտական ծառայություններ		424100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մասնագիտական ծառայություններ	424110									
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և		425100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425110									
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ		425200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ	425210									
	Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425220									
	Այլ մեքենաների և սարքավորումների ընթացիկ	425290									
Գրասենյակային նյութեր և հագուստ		426100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գրասենյակային պիտույքներ	426110									
	Հագուստ և համազգեստ	426120									
Տրանսպորտային նյութեր		426400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Վառելիքի ծախսեր	426410									
	Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար	426490									
Առողջապահական և լաբորատոր նյութեր		426600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Բժշկական քննությունների նյութեր	426610									
Կենցաղային և հանրային սննդի նյութեր		426700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Կենցաղային նյութեր (Մաքրիչ և հիգիենիկ նյութեր)	426710									
	Հանրային սննդի նյութեր	426720									
	Կենցաղային այլ նյութեր (Տնտեսական նյութեր ապրանքներ)	426730									

Պարտադիր վճարներ		482300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ պարտադիր վճարներ	*482350*									
Այլ ծախսեր		486100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ ծախսեր	*486110*									

Տնօրեն՝ _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ _____
(ստորագրություն)

N 5 Հավելված
2024թ. կնքված
N ԴՏՊ – Ծ1032.Մ11001/23-4 պայմանագրի

Նախարարություն՝	Կազմակերպություն՝
հասցե՝	հասցե՝
հ/հ հվհհ	հ/հ հվհհ

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

« »« » 2024թ.

Պայմանագրի անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝

Պայմանագրի համարը՝

Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար , և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրեն , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « »« » 2024թ. N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « »« » 2024թ–ից « »« » 2024թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Նվազագույն շահավետ գինը՝մեկ միավորի հաշվարկով (դրամ)*	*Մեկ միավորի գինը (դրամ)*	*Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը (դրամ)*	*Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)*	*Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը*
1	2	3	4	5=3-4	6=2x.5	7
Տարեց անձանց շուրջօրյա խնամք	x	x	x	x	x	x
Փոփոխուն ծախս	մ/օր					
Հաստատուն ծախս						
Ընդամենը	x	x	x	x		x

Ընդունեց՝

/ստորագրություն/

ազգանուն

Կ.Տ

Հանձնեց՝

/ստորագրություն/

ազգանուն

Կ.Տ

N 6 Հավելված

2024 թ.«06» «02» կնքված

N ԴՏՊ – Ծ1032.Մ11001/24-4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N __
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

« » « » 2024թ.

Պայմանագրի անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2024թ.

Պայմանագրի համարը՝

Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Կատարողի անվանումը՝

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 2024թ.-ից « » « » 2024թ.-ը ընկած ժամանակահատվածում իրականացվել է հետևյալ ծառայությունները.

ՀՀ	Մատուցված ծառայությունների					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը	Քանակական բնութագիրը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
1	Ծերերի սննդի, սոցիալ-կենցաղային, բժշկական և այլ պահանջմունքների բավարարում	Շուրջօրյա խնամքի ծառայություններ՝ սննդի գծով /մարդ/օր/				
2		Շուրջօրյա խնամքի ծառայություններ՝ հաստատուն ծախսերի գծով /միավոր/	1	1		

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն
/Դրական/բացասական/

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ N 3
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի
'24''դեկտեմբերի'2007թվականի N 899-Նիրամանի

ՔԱՂՎԱԾՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ

1. Հիմնարկի անվանումը՝ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

2.Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Միջոցառում	Նախարարություն	
10	02	01	1032	11001	104	016

Ծրագրի անվանումը՝ Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սննդի կազմակերպում և կացարանով ապահովում

Միջոցառման անվանումը՝ «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ»

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ ՀՀՖՆ Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի համարը

900011016764

5. Պայմանագրի կնքման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը՝

« 08 » « փետրվարի » 2024թ. կնքված ԴՏՊ – Ծ1032.Մ11001/24-4 պայմանագիր

6. Գնման ձևը՝ ԴՄ

7. Պայմանագրի կողմ հանդիսացող մատակարարի կապալառուի կամ ծառայություն մատուցողի անվանումը՝ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ

գրանցման վայրը՝ ք.Վարդենիս, Զորավար Անդրանիկի փող. 4, նրբ. 1

հարկային հաշվառման կոդը՝ 08800705

սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ «ՀՀ ՖՆ գործառնական վարչություն»

հաշվեհամարը՝ 900158000027

8. պայմանագրի կատարման ժամկետը 31.12.2024թ.

Չափի միավորը՝ հազար դրամ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը*	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից միջոցների կամ արտաբյուջետային միջոցների հաշվին, ընդ որում՝												
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	463700	114,833.8	229,667.6	**344,501.3**	459,335.1	574,168.9	**689,002.6**	803,836.4	918,670.2	**1,033,503.8**	1,148,337.6	1,263,171.3	**1,378,005.1**	**1,378,005.1**
ԸՆԴԱՄԵՆԸ		**114,833.8**	**229,667.6**	**344,501.3**	**459,335.1**	**574,168.9**	**689,002.6**	**803,836.4**	**918,670.2**	**1,033,503.8**	**1,148,337.6**	**1,263,171.3**	**1,378,005.1**	**1,378,005.1**

Պայմանագրով նախատեսված կանխավճարի													
Հատկացման վերջին ժամկետը	Մարման ժամկետը 2024 թվական (Բյուջեից հատկացված կամ արտաբյուջեից հատկացված կանխավճարի գծով)												
	I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
16.02.2024												114,833.8	114,833.8

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը՝ Ս. Մուրադյան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի ստորագրությունը Ա. Կեսոյան

« 09» « փետրվարի » 2024 թվական

Կնիքի տեղը